
ՁՄՈԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Էդգար Կոստանդյան

© Էդգար Կոստանդյան-2015

**Գիրքն էլեկտրոնային հրատարակության պատրաստեց Արման
Վերանյանը:**

**Այս գրքի կամ դրա որևէ առանձին հատվածի ցանկացած ձևով և
եղանակով վերարտադրությունը, տարածումն ու որոնողական
համակարգերում պահպանումն առանց հեղինակի թույլտվության
արգելվում է: Շնորհակալություն հրատարակչի աշխատանքը
գնահատելու համար:**

Հրատարակվել է Յուվիաբում (upub.am)

Նա, ով լաց է լինում կողքի սենյակում... ով բռնում է ձեռքդ ու համոզում, որ դեռ ժամանակ ունես... Ժանտախտը կերել է քեզ, բայց դու ապրելու մասին ես մտածում, որովհետեւ վերջին ժամերդ նրանն են... Ու վախենում ես, որ ամեն պահի նա կարող է բաց թողնել ձեռքդ... ... Վերջին վայրկյաններդ են, նրա աչքերին ես նայում... կորուստդ ես շոշափում, չարածդ, մարմնիցդ ավելի սաստիկ ցավացող երազանքներդ, որ քեզնից կես վայրկյան շուտ են մեռնելու... ափսոսում ես, որ ժամանակին քեզ վախկոտի պես ես պահել... հետո ձեռքը դանդաղ հեռանում է ձեռքից... էլի նրան ես նայում, ուզում ես հպվել, բայց չես հասնում... ... Սրտի վերջին ծակոցը միշտ ցավոտ է լինում... Գուցե նա էր քո վերջին սրտխփոցը, վերջինս, ում չունեցար... որովհետեւ շրջանակ գծեցիր, ապրեցիր դրա մեջ ու կույզնացիր քո հնարած քառակուսիներին... ...Կյանքդ գալիս է աչքիդ առաջ... բոլորին ներում ես, որ մաքուր հեռանաս... նրան էլ ես ներում... նա, ով աշխարհի ամենագեղեցիկ աչքերն ունի... ներում ես, որ ձեռքդ բաց թողեց այն ժամանակ, երբ ամենաշատն ունեիր նրա կարիքը... Հետո ինքդ քեզ ես ներում, որ դավաճանել ես քեզ, որ զգացմունքներդ քառակուսիներին ես ծախել, որ գեղեցիկ աչքերը կարծիքներին ես զոհել... Խաղաղվում ես, փնտրում ես աչքերը, ձեռքը... ու վերջին անգամ շնչում սենյակի ծանր օդը... ... Արդեն չկաս, բայց զգում ես՝ ոնց է ձեռքը փակում աչքերդ... բոլորը ներս են մտնում, լացի ձայնը երկինք է բարձրանում... գեղեցիկ աչքերն այդպես էլ չեն թացանում... Հետո քո մասին լավ բաներ են պատմում իրար, կատարյալ ես դառնում մի տեսակ... Նա լռում է, ոչինչ չի խոսում քո մասին, որովհետեւ մեռնողի հետեւից չեն հայհոյում... ... Սեղան են նստում՝ քեզ հիշելու... Միայն նա է նկատում, որ այժմ դատարկ է... մի քանի վայրկյան նայում է դատարկ այժմին ու... տեղի է ունենում ամենասարսափելին. կյանքը շարունակվում է...

Է.Կ.

1

...Հիվանդոտ աչքեր ունի երեխան, հիվանդոտ ու գեղեցիկ... Ամեն առավոտ տեսնում եմ՝ ոնց է կավիճը ձեռքին ինչ-որ անհասկանալի պատկերներ խզրզում ասֆալտին: Ամեն անգամ երկար նայում եմ նրան, ապա խզրզոցներին, ու շարունակում եմ ճանապարհա: Ինչ-որ մեծ, հասուն բան կա այս աղջնակի աչքերում, ինչ-որ վերապրում, ինչ-որ գիտակցում կամ չգիտեմ թե ինչ: Նա սովորական չէ:

Այս առավոտը մյուսներից ոչնչով չի տարբերվում. նա էլի կավիճը ձեռքին նկարում է:

-Կգա՞ս նկարենք,- հարցնում է՝ նկատելով երկար նայելս:

-Ես նկարել չգիտեմ,- ասում եմ՝ առանց ժպտալու:

Սովորաբար մեծերը ժպտում են երեխաներին կամ երեսին հիմար ծամածռություններ տալիս, իսկ ես ու այս փոքրիկն իրար հետ խոսում ենք, ինչպես երկու հասուն մարդիկ:

-Հեշտ ա, արի նկարենք,- ինձ է մեկնում ձեռքի կավիճը:

Էլի նայում եմ նրա խզրզոցներին: Առավոտյան արևից նոր-նոր տաքացող ասֆալտին նա գծեր է քաշում, գուցե ամեն գիծը մի բան նշանակում է, էնպիսի մի բան, որ միայն ինքը գիտի: Կամ գուցե ուզում է, որ ես էլ հասկանամ իր գծերը:

-Ես լուրջ եմ ասում, չեմ կարողանում նկարել: Ավելի լավ ա՝ դու նկարես, ես նայեմ, լավ՞ վ:

Նա ոչինչ չի պատասխանում, գլուխը կախ շարունակում է նկարել:

-Հետո կխոսենք,- ասում եմ աղջնակին ու շարունակում ճանապարհա:

... Փոքրիկի անունը Մարի է: Ես ու նրա մայրը՝ Ինեսը, նույն բակում ենք մեծացել: Ինեսը Կոնսերվատորիայի ուսանողուհի էր, երբ կորցրեց մորը (հայրը վաղուց էր մահացել), ու ընդամենը մի քանի ամիս անց ամուսնացավ: Ամուսինը տեղափոխվեց Ինեսի տուն, հետո ծնվեց Մարին: Այս փոքրիկը դեռ մեկ տարեկան չկար, երբ հայրը մեռավ... Աշխույժ, ակտիվ տղա էր: 2008-ին, երբ ժողովուրդը դուրս եկավ Ազատության հրապարակ ինչ-որ բան պահանջելու (հայտնի էլ չի՝ ումից և ինչ), ինքն էլ էդ պահանջողներից մեկն էր: Առաջին շարքերում կանգնած՝ արդարություն էր մուրում... Գարնան առաջին օրը Ֆրանսիայի դեսպանատան դիմաց գտան նրա անշնչացած մարմինը: Ինեսն այս ամենից դժվար ուշքի եկավ, ժամանակ պահանջվեց, մինչև կարողանա հաղթահարել սթրեսն ու անցնել բնականոն կյանքին: Հիմա նա մատուցողուհի է աշխատում երևանյան սրճարաններից մեկում, իսկ երեխային խնամում է նրա դիմացի հարևանուհի հաստառ Ջուլյոն, որին ծնվածս օրից տանել չեմ կարողացել: Երբ շենքի հետևի կրպակում հանդիպում ենք, նա ինձ չի բարևում, չգիտեմ՝ որն է պատճառը, բայց երևի մի բանում մեղավոր եմ: Նա անընդհատ ինչ-որ ուտելիքի պահպանման ժամկետ է ստուգում: Չեմ հիշում մի դեպք, երբ մտնեմ էդ գրողի տարած կրպակ, ու Ջուլյոն էդ ամիս-ամսաթվերին նայելուց չլինի: Դա երևի նրանից է, որ մենակ, պարապ կին է, ու իր պահպանման ժամկետը վաղուց անցել է...

...Օրը, փաստորեն, վատ չի սկսել, ու ոնց որ էս վեպն էլ ինչ-որ կերպ սկսեց, թեկուզ առանց գրողին վայել գեղարվեստական նկարագրությունների ու շուրջս տեսած ամեն ծառ ու թփի մասին խոսելու, բայց սկսեց...

... Տարբու վարորդը սկզբում չխոսկան էր երևում, ու դա գեղեցիկ օրվա սկիզբ էր նշանակում ինձ համար, բայց այդ խաղաղությունն ընդամենը երեք-չորս րոպեանոց պատրանք էր: Առանց երկար-բարակ նախաբանի խախտեց լռությունն ու սկսեց քաղաքականությունից խոսել, հետո անցավ կրոնին, մի երկու բան կաթողիկոսի մասին ասաց, հետո պարզվեց, որ գիտի, թե ուր կորավ Վանոն ու ով խփել տվեց Վազգենին: Հստակ կանխորոշեց հաջորդ ընտրությունների հավանական պրեզիդենտին, ու երբ հերթն արդեն հասել էր եղանակի կանխատեսմանը, տեղ հասանք:

-Որքա՞ն եմ վճարելու,- հարցրի:

-Դե մի բան տուր էլի,- ասաց՝ առանց դեմքիս նայելու:

Գրքի ամբողջական տարբերակը կարդալու համար անհրաժեշտ է գնել այն և ներբեռնել ԻՎ գրքեր
բաժնից:

Անցնել գրքի էջ